ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2025 թվականի №-Ա

«ՈՒԱՅԹ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի ապրիլի 18-ի №127-Ա որոշմամբ «ՈՒԱՅԹ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Ուայթ Էներջի» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0727 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0727 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի ապրիլի 19-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), ինչը, սակայն, չի ներկայացվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2025 թվականի ապրիլի 19-ը,

բ) Ընկերությունը, մինչև 2025 թվականի ապրիլի 19-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2025 թվականի ապրիլի 23-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության

ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 23-ի №ՄՄ/34.3-Մ2-12/1809-2025 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, և միևնույն ժամանակ, 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը, ԼԷ №0727 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2025 թվականի ապրիլի 19-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2026 թվականի ապրիլի 19-ը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0727 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ

անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի մայիսի 5-ի №2965/10/5 գրությամբ ներկայացված թիվ 25-0394 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 181 250 (վեց միլիոն հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 362 500 (տասներկու միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2026 թվականի հունիսի 3-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0727 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2026 թվականի ապրիլի 19-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
հունիսի 2025թ.